ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Եղեգնաձոր

N 62 «14» հոկտեմբերի 2014թ.

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի N 762-Ն որոշմամբ հաստատված կարգի 49 և 50-րդ կետերի պահանջները՝ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգին համապատասխան

Մարզպետը **որոշում է՝**

1. Հաստատել մրցութային հանձնաժողովի մրցույթի արդյունքների վերաբերյալ արձանագրությունը

2. Մրցույթում հաղթող ճանաչել.

2.1 Կեչուտի « ՊԱԶ տրանս » ՍՊԸ-ին հետևյալ երթուղիներում

- Եղեգնաձոր - Վայք
- Ջերմուկ - Եղեգնաձոր
- Վայք - Ջերմուկ

3. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյանին՝ մրցույթում հաղթող ճանաչված «ՊԱԶ տրանս » ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր և ներկայացնել մարզպետի հաստատմանը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Է. ՂԱԶԱՐՅԱՆ